ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

29 հունիսի 2020 թվականի N 165-Ա

ԱՐՏԱԿ ԱՆՏԻՆՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, 17-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N 441-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածի 2-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով Արտակ Սիրակի Անտինյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Արտակ Սիրակի Անտինյանին 2020 թվականի հունիսի 29-ից՝ 9 ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) առաջին բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 52-25.5-Մ2-1) պաշտոնում:

2. Փորձաշրջանը համակարգող նշանակել Ծառայության առաջին բաժնի պետ (ծածկագիր՝ 52-25.5-Ղ4-1) Անահիտ Մալխասյանին:

3. Աշխատավարձը սահմանել համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

6/29/2020

X

ԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Signed by: BAGHDASARYAN ANI 7504910546